Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
2021թ. հունիսի 8 -ի
N 29 - Լ հրամանի

ԿԱՐԳ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՄԱՆԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՀԱՆՁՆՎԱԾ (ԱՄՐԱՑՎԱԾ), ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են պետական կառավարման համակարգի մարմինների (այսուհետ՝ պետական մարմին) տիրապետմանը և օգտագործմանը հանձնված (ամրացված), կազմակերպություններին, ընկերություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված օտարման ենթակա պետական սեփականություն հանդիսացող մինչև տասը միլիոն դրամը գնահատված արժեքով պիտանի շարժական գույքի (այսուհետ՝ Գույք) պահառության հետ կապված հարաբերությունները:

2. Գույքի պահառությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ՊՈԱԿ), այդ նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1033-Ն որոշմամբ հատկացված՝ Երևան քաղաքի Հաղթանակի 2-րդ փողոցի 79 հասցեում գտնվող տարածքում (այսուհետ՝ պահառության տարածք):

3. Պահառության ենթակա է միայն ՊՈԱԿ-ի կողմից յուրաքանչյուր միավոր՝ մինչև տասը միլիոն դրամ նախնական գնահատված արժեքով Գույքը:

4. Գույքի նախնական գնահատումն իրականացնում է ՊՈԱԿ-ը՝ պետական մարմինների, կազմակերպությունների, ընկերությունների և հիմնադրամների կողմից Կոմիտե ներկայացրած Գույքի գնահատման համար անհրաժեշտ ելակետային փաստաթղթերի հիման վրա:

5. Գույքի նախնական գնահատման արդյունքներից ելնելով՝ ՊՈԱԿ-ը գրավոր տեղեկացնում է Կոմիտեին, վերջինս՝ պետական մարմնին կամ կազմակերպությանը կամ ընկերությանը կամ հիմնադրամին՝

1) գույքի արժեքը մինչև տասը միլիոն դրամը չգերազանցելու դեպքում՝ Գույքի պահառության ենթակա լինելու մասին,

2) գույքի արժեքը տասը միլիոն դրամը գերազանցելու դեպքում՝ Գույքի պահառության ենթակա չլինելու մասին:

6. Գույքը պահառության տարածք ներկայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերն են՝

1) հանձնող պետական մարմնի, կազմակերպության, ընկերության և հիմնադրամի կողմից լիազորված անձի լիազորագիրը և անձը հաստատող փաստաթուղթը (բնօրինակներ),

2) տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի պատճենը (բացակայության դեպքում՝ սեփականության իրավունքի վկայականի պատճենը),

3) Գույքի տեխնիկական վիճակի վերաբերյալ տեղեկանքը՝ հաստատված տվյալ պետական մարմնի, կազմակերպության, ընկերության և հիմնադրամի կլոր կնիքով (տրանսպորտային միջոցների համար N 1 Ձևով սահմանված տեղեկանքը, իսկ այլ շարժական գույքերի համար N 2 Ձևով սահմանված տեղեկանքը):

7. Մինչ Գույքը ՊՈԱԿ-ի կողմից պահառության ընդունելը դրա փաստացի տեխնիկական վիճակը պետք է համեմատվի պետական մարմնի, կազմակերպության, ընկերության և հիմնադրամի կողմից ներկայացված Գույքի տեխնիկական վիճակի մասին տեղեկանքում նկարագրված տեխնիկական վիճակի հետ, պահառության տարածքում գույքի տեսողական զննում իրականացնելու միջոցով: Տեսողական զննման արդյունքները ենթակա են գրավոր արձանագրման:

8. Գույքի արտաքին տեսողական զննումն իրականացվում է պահառության ստորաբաժանման ղեկավարի կամ նրա տեղակալի և պետական մարմնի, կազմակերպության, ընկերության և հիմնադրամի՝ այդ նպատակի համար լիազորված ներկայացուցչի կողմից համատեղ: Գույքի արտաքին տեսողական զննման ընթացքում այն տարբեր դիրքերից պետք է լուսանկարահանվի թվային ֆոտոխցիկով: Ստացված լուսանկարները կցվում են Գույքի հանձնման-ընդունման ակտին: Լուսանկարները պետք է մանրամասն և ամբողջությամբ պատկերեն Գույքի բոլոր տեսանելի հատվածները՝ ներառյալ շարժիչը, բեռնախցիկը և սրահը: Գույքի արտաքին տեսողական զննման արդյունքում Գույքի տեխնիկական վիճակի մասին տեղեկանքի և դրա փաստացի տեխնիկական վիճակի միջև անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում, դրանք արձանագրվում են՝ սույն կարգի N3 և N4 Ձևի

համապատասխանաբար հանձնման-ընդունման ակտերում, ինչպես նաև ակտերին կցվող լուսանկարներում: Արտաքին տեսողական զննման աշխատանքների ավարտից հետո պահառությունն իրականացնող ՊՈԱԿ-ի ստորաբաժանման ղեկավարի և պետական մարմնի, կազմակերպության, ընկերության և հիմնադրամի՝ այդ նպատակի համար լիազորված ներկայացուցչի կողմից Գույքը հանձնվում է պահառության, ինչի վերաբերյալ կազմվում, երկկողմ ստորագրվում և պահառությունն իրականացնող ՊՈԱԿ-ի ստորաբաժանման կլոր կնիքով կնքվում է հանձնման-ընդունման ակտը՝ (N 3 կամ N 4 Ձև): Ակտը կազմվում է երեք օրինակից՝ մեկական օրինակ այն ստորագրողներից յուրաքանչյուրին և մեկ օրինակ՝ Կոմիտե ներկայացնելու համար:

9. Պահառության տարածք ներկայացված Գույքը պետք է համապատասխանի Գույքի փաստաթղթերում առկա տվյալներին (տրանսպորտային միջոցի դեպքում՝ մակնիշը, տիպարը, թափքի տեսակը, գույնը, համարանիշը և նույնականացման համարը (VIN)՝ տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրում կամ սեփականության իրավունքի վկայականում նշված համանման տվյալներին, այլ շարժական գույքի դեպքում՝ գույքի որակական և քանակական հատկանիշները բնութագրող (գույքի նույնականացման) և օրենսդրության մյուս պահանջներին համապատասխանող փաստաթղթերին, ինչպես նաև տեխնիկական անձնագրերին (առկայության դեպքում): Գույքի փաստացի տվյալները փաստաթղթերում առկա տվյալներին չհամապատասխանելու դեպքում Գույքը պահառության չի ընդունվում:

10. Գույքը պահառության ընդունելուց հետո ՊՈԱԿ-ի կողմից սահմանված կարգով իրականացվում են Գույքի գնահատման աշխատանքներն ու Կոմիտե է ներկայացվում դրա վերաբերյալ հաշվետվությունը, որում նշվում է Գույքը պահառությանը հանձնված լինելու հանգամանքը:

11. Գույքն աճուրդով վաճառվելու դեպքում այն չի վերադարձվում պետական մարմնին, կազմակերպության, ընկերությանը և հիմնադրամին և ենթակա է հանձնման անմիջապես դրա գնորդին, ինչի մասին Կոմիտեն գրավոր տեղեկացնում է.

1) պետական մարմնին, կազմակերպությանը, ընկերությանը և հիմնադրամին՝ Գույքը հաշվեկշռից հանելու աշխատանքներն իրականացնելու համար,

2) ՊՈԱԿ-ին՝ Գույքի գնորդին հանձնելու աշխատանքներն իրականացնելու համար (նշելով Գույքի գնորդի անհատական տվյալները):

12. Գույքն աճուրդով վաճառելու գործընթացը դադարեցնելու դեպքում Կոմիտեն այդ մասին գրավոր տեղեկացնում է պետական մարմնին, կազմակերպությանը, ընկերությանը և հիմնադրամին և ՊՈԱԿ-ին, նշելով.

1) օտարման գործընթացը շարունակելու և նոր աճուրդ կազմակերպելու նպատակով Գույքի պահառությունը շարունակելու անհրաժեշտությունը, կամ

2) Գույքը պետական մարմնին, կազմակերպությանը, ընկերությանը և հիմնադրամին վերադարձնելու անհրաժեշտությունը:

13. Պահառությունն իրականացնող ՊՈԱԿ-ի ստորաբաժանման ղեկավարի կողմից Գույքը դրա գնորդին հանձնելու կամ այն ստանալու համար լիազորված պետական մարմնի, կազմակերպության, ընկերության և հիմնադրամի ներկայացուցիչին վերադարձնելու աշխատանքներն իրականացվում են պահառության տարածքում, ինչի վերաբերյալ կազմվում, երկկողմ ստորագրվում և ՊՈԱԿ-ի համապատասխան ստորաբաժանման կլոր կնիքով կնքվում է հանձնման-ընդունման ակտ՝ սույն կարգի N 5 կամ N 6 Ձևով: Ակտը կազմվում է երեք օրինակից՝ մեկ օրինակը՝ Կոմիտե ներկայացնելու համար, մեկ օրինակը հանձնող պետական մարմնին, կազմակերպությանը, ընկերությանը և հիմնադրամին, մեկ օրինակը ՊՈԱԿ-ին:

14. ՊՈԱԿ-ի կողմից իրականացվում է ի պահ ընդունված գույքի հաշվառում, այդ նպատակով նախատեսված գրանցամատյանի վարման միջոցով՝ ըստ շարժական գույքի տարատեսակների (տրանսպորտային միջոցներ, այլ շարժական գույք):

15. Պահառության տարածքում պահառությունն իրականացնող ՊՈԱԿ-ի ստորաբաժանումը պետք է ապահովի Գույքի անվտանգ պահպանությունը (ներառյալ՝ արտաքին գիշերային լուսավորությունը, շուրջօրյա տեսահսկումը, սարքավորումների անխափան էլեկտրամատակարարումը և այլն):

Ձև N 1

ՏԵՂԵԿԱՆՔ

Տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի վերաբերյալ

«_____» մակնիշը և տիպարը (պ/հ_____)

Թողարկման տարեթիվը «_____»

Տրանսպորտային միջոցի հաշվառման վկայականի համարը «_____»

Նույնականացման համարը «_____»

«_____»_____20____թ.

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Կատարած վազքը (կմ)	
Շարժիչի վիճակը	
Փոխանցման տուփի վիճակը	
Թափքի վիճակը	
Այլ հանգույցների և դետալների վիճակը (ընթացային մաս, կամրջակներ և այլն)	
Բացակայող հանգույցներ և դետալներ	
Վթարայնության վերաբերյալ*	
Այլ լրացուցիչ տեղեկություններ	

*Տրանսպորտային միջոցի վթարայնության դեպքում սույն տեղեկանքին պետք է կցվի համապատասխան փաստաթուղթ:

_____ _____ _____

զբաղեցրած պաշտոնը) (ստորագրություն) (անունը, ազգանունը)

_____

(պետական մարմնի, ընկերության, կազմակերպության և հիմնադրամի անվանումը)

Կ.Տ

Ձև N 2

ՏԵՂԵԿԱՆՔ

Շարժական գույքի տեխնիկական վիճակի վերաբերյալ

«_____»_____20____թ.

ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Գույքի անվանումը (տիպարը)	
Թողարկման տարեթիվը	
Քանակը	
Մեկ միավորի քաշը	
Վիճակը՝ աշխատանքային/ոչ աշխատանքային	
Ենթակա է հետագա շահագործման թէ ոչ	
Տեղեկություններ անսարքությունների մասին	
Բացակայող դետալներ	
Այլ լրացուցիչ տեղեկություններ	

_____ _____ _____

(զբաղեցրած պաշտոնը) (ստորագրություն) (անունը, ազգանունը)

_____

(պետական մարմնի, ընկերության, կազմակերպության և հիմնադրամի անվանումը)

Կ.Տ

Ձև N 3

ԱԿՏ N _____

Շարժական գույքի հանձնման-ընդունման

«____»_____20____ թ

Մենք, ներքոստորագրյալներս.

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն»
ՊՈԱԿ-ի նյութատեխնիկական միջոցների
պահպանման ստորաբաժանման ղեկավար՝ _____

(անունը, ազգանունը)

և _____

_____ ներկայացուցիչ՝ _____

(անունը, ազգանունը)

Կազմեցինք սույն ակտն այն մասին, որ՝

_____

(պետական մարմնի, ընկերության, կազմակերպության և հիմնադրամի անվանումը)

_____**հանձնեց, իսկ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը պահառության ընդունեց հետևյալ գույքը.**

Գույքի անվանումը _____

Գույքի արտադրության՝ դրա բացակայության դեպքում ձեռքբերման (շահագործման հանձնելու) տարեթիվը՝ _____

Գույքի բաղադրիչների անվանումներն ու համարները (առկայության դեպքում)

_____ N _____

_____ N _____

Գույքի հետ ներկայացվող փաստաթղթերը՝

_____

(փաստաթղթի անվանումը, համարը և տրման օրն, ամիսը, տարեթիվը)

_____

(փաստաթղթի անվանումը, համարը և տրման օրն, ամիսը, տարեթիվը)

Գույքն աճուրդով վաճառվելու դեպքում այն առանց _____

_____ **վերադարձնելու**

(պետական մարմնի, ընկերության, կազմակերպության և հիմնադրամի անվանումը)

հանձնվելու է անմիջապես դրա գնորդին:

Նշումներ Գույքի արտաքին տեսողական զննման արդյունքում հայտնաբերված՝ Գույքի տեխնիկական վիճակի մասին տեղեկանքի և դրա փաստացի տեխնիկական վիճակի միջև առկա անհամապատասխանությունների վերաբերյալ:

_____

_____

_____

_____

_____

_____

Սույն ակտին կցվում է Պետական հիմնարկների կողմից ներկայացված շարժական Գույքի տեխնիկական վիճակի վերաբերյալ տեղեկանքը և Գույքի արտաքին տեսողական զննման ընթացքում արված, թվով՝_____ լուսանկարները:

Գույքը հանձնեց

_____

_____ ներկայացուցիչ՝ _____

(ստորագրություն)

Գույքն ընդունեց

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն»
ՊՈԱԿ-ի նյութատեխնիկական միջոցների
պահպանման ստորաբաժանման ղեկավար՝ _____

(ստորագրություն)

«____»_____20____ թ

Ձև N 4

ԱԿՏ N____

Տրանսպորտային միջոցի հանձնման-ընդունման
«____»_____20____թ.

Մենք ներքոստորագրյալներս.

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն»
ՊՈԱԿ-ի նյութատեխնիկական միջոցների
պահպանման ստորաբաժանման ղեկավար՝ _____
(անունը, ազգանունը)

և _____

_____ներկայացուցիչ՝_____
(անունը, ազգանունը)

Կազմեցինք սույն ակտն այն մասին, որ _____
(պետական մարմնի, ընկերության, կազմակերպության և հիմնադրամի անվանումը)

_____հանձնեց, իսկ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն»

ՊՈԱԿ-ը պահառության ընդունեց հետևյալ տրանսպորտային միջոցը.

մակնիշը և տիպարը _____, գույնը _____

արտադրության տարեթիվը _____, վազքը _____ կմ.

նույնացման համարը _____ հաշվառման համարանիշը_____

թափք N_____ շարժիչ N_____ հենասարք N _____

Տրանսպորտային միջոցի հետ ներկայացվող փաստաթղթերը՝

_____
(փաստաթղթի անվանումը, համարը և տրման օրն, ամիսը, տարեթիվը)

_____
(փաստաթղթի անվանումը, համարը և տրման օրն, ամիսը, տարեթիվը)

Նշումներ Գույքի արտաքին տեսողական զննման արդյունքում հայտնաբերված՝ Գույքի տեխնիկական վիճակի մասին տեղեկանքի և դրա փաստացի տեխնիկական վիճակի միջև առկա անհամապատասխանությունների վերաբերյալ:

_____

_____

_____

_____

_____

_____

Սույն ակտին կցվում են Պետական հիմնարկների կողմից ներկայացված տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի վերաբերյալ տեղեկանքը և Գույքի արտաքին տեսողական զննման ընթացքում արված, թվով՝_____ լուսանկարները:

Տրանսպորտային միջոցն աճուրդով վաճառվելու դեպքում այն առանց _____

_____ **վերադարձնելու**

(պետական մարմնի, ընկերության, կազմակերպության և հիմնադրամի անվանումը)

հանձնվելու է անմիջապես դրա գնորդին:

Տրանսպորտային միջոցը հանձնեց

_____

_____ ներկայացուցիչ՝ _____

(ստորագրություն)

Տրանսպորտային միջոցն ընդունեց

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն»
ՊՈԱԿ-ի նյութատեխնիկական միջոցների
պահպանման ստորաբաժանման ղեկավար՝ _____

(ստորագրություն)

«____»_____20____թ.

Ձև N 5

ԱԿՏ N ____

Շարժական գույքի հանձնման-ընդունման
«____»_____20____թ.

Մենք ներքոստորագրյալներս.

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն»
ՊՈԱԿ-ի նյութատեխնիկական միջոցների
պահպանման ստորաբաժանման ղեկավար՝ _____
(անունը, ազգանունը)

և _____
(գնորդ կազմակերպության անվանումը կամ քաղաքացու անուն ազգանունը)

_____ ներկայացուցիչ՝ _____
(անունը, ազգանունը)

Կազմեցինք սույն ակտն այն մասին, որ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն»

ՊՈԱԿ-ը հանձնեց, իսկ _____
(գնորդ կազմակերպության անվանումը կամ քաղաքացու անուն ազգանունը)

ընդունեց հետևյալ Գույքը.

Գույքի անվանումը _____

Գույքի արտադրության՝ դրա բացակայության դեպքում ձեռքբերման (շահագործման հանձնելու) տարեթիվը՝ _____

Գույքի բաղադրիչների անվանումներն ու համարները (առկայության դեպքում)

_____ N _____

_____ N _____

Գույքի հետ ներկայացվող փաստաթղթերը՝

_____
(փաստաթղթի անվանումը, համարը, և տրման օրն, ամիսը, տարեթիվը)

_____
(փաստաթղթի անվանումը, համարը, և տրման օրն, ամիսը, տարեթիվը)

_____
(փաստաթղթի անվանումը, համարը, և տրման օրն, ամիսը, տարեթիվը)

_____
(փաստաթղթի անվանումը, համարը, և տրման օրն, ամիսը, տարեթիվը)

Գույքը հանձնեց

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն»
ՊՈԱԿ-ի նյութատեխնիկական միջոցների
պահպանման ստորաբաժանման ղեկավար՝ _____
(ստորագրություն)

Գույքն ընդունեց

_____
(գնորդ կազմակերպության անվանումը կամ քաղաքացու անուն ազգանունը)

_____ ներկայացուցիչ՝ _____
(ստորագրություն)

«____»_____20____թ.

Ձև N 6

ԱԿՏ N _____

Տրանսպորտային միջոցի հանձնման-ընդունման

«____»_____20____ թ

Մենք, ներքոստորագրալներս.

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն»
ՊՈԱԿ-ի նյութատեխնիկական միջոցների
պահպանման ստորաբաժանման ղեկավար՝ _____
(անունը, ազգանունը)

և _____
(գնորդ կազմակերպության անվանումը կամ քաղաքացու անուն ազգանունը)

ներկայացուցիչ՝ _____
(անունը, ազգանունը)

Կազմեցինք սույն ակտն այն մասին, որ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն»

ՊՈԱԿ-ը հանձնեց, իսկ _____
(գնորդ կազմակերպության անվանումը կամ քաղաքացու անուն ազգանունը)

_____ **ընդունեց հետևյալ տրանսպորտային միջոցը.**

Մակնիշը և տիպարը _____**, գույնը** _____

արտադրության տարեթիվը _____**, վազքը** _____ **կմ.**

նույնացման համարը _____ **հաշվառման համարանիշը** _____

թափք N _____ **շարժիչ N** _____ **հենասարք N** _____

Տրանսպորտային միջոցի հետ ներկայացվող փաստաթղթերը՝

_____
(փաստաթղթի անվանումը, համարը և տրման օրն, ամիսը, տարեթիվը)

_____
(փաստաթղթի անվանումը, համարը և տրման օրն, ամիսը, տարեթիվը)

Տրանսպորտային միջոցը հանձնեց

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն»
ՊՈԱԿ-ի նյութատեխնիկական միջոցների
պահպանման ստորաբաժանման ղեկավար՝ _____
(ստորագրություն)

Տրանսպորտային միջոցն ընդունեց

_____

(գնորդ կազմակերպության անվանումը կամ քաղաքացու անուն ազգանունը)

_____ ներկայացուցիչ՝ _____

(ստորագրություն)

«____»_____20____թ.